



Պատասխանատու
Ընդհանրական Փրինցիպալ

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԵՐՈՅ

Համակրն ուղղելի են
առ. Ղ. Գ. Պալապարեան

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՕՐԱՆԵՐՈՐԳ ԶԱՐԻ ԶՄԻՌՆԵՐՈՅ ԸԱԲԱԹ 43 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1879 ԹԻԻ 1129

ԱԶԳԱՅԻՆ

Կանոն ժողովը պատուիրած է Դատաւարանա-
յին խորհրդի որ ամենամեծ խնդրոյ համար
կուս ամենամեծ կանոնադրի ծրագիր մը
տարաւորելով իրեն մատուցանէ, իսկ թէ՛
լէ՛ֆէթէ :

Այս խնդրոյ մասին շինուելիք կանոնադրին
ամենամեծ խնդրանքը շատ անգամ խնդրուած
էր մահու և կենաց խնդիր մ'է և ուստի ան-
հայտնալիս Ոչ ոք աւելի կարող է գիտնալ քան
տարիարքարանը կամ ազգ. վարչութիւնը թէ
կանոնադրին չգոյութիւնը որքան անկար-
ելի է անցաւ և ցաւալի եղելութեանց ծնունդ-
ուած է ազգին մէջ :

Մենք պարտաւոր ամեն բանէ նախաձեռնար
ուել մեր ներքին բարեկարգութեամբ զբա-
ղուիլ : Հ. Ե. ստանի հարստահարութեանց բարձ-
ուն խնդիրը ա. գէն աշխարհվարական տուժա-
րուն մէջ իր տեղը բռնեց, ուստի ողորմ կամ
ազան յուսալի է անոր բարի վարձանքի մը
խնդիրը : Ա. Գ. եթէ մէկ կողմանէ հարկ է որ
տարիարքարանը կանոնադրի համար գրեմք, խօսիմք,
պահանջեմք և գործեմք, միւս կողմանէ ևս մեր
տարիարքարանը բարեկարգութեան համար աշխատի և
գործել մեծ պարտականութիւն մ'է մեզ : Նախ
արեւկարգ և կրթեալ ժողովուրդ մը ըլլամք,
ապա գիւրգիւ կրնամք ի մեզ հրաւիրել աշ-
խարհի համակրանքն ու գութնը :

Վանքերու բարեկարգութեան համար ևս նու-
ապա կանոնադրութիւններ շինել պարտի Ազգ.
խորհրդութիւնը : ասոր կարեւորութիւնը ազգայն-
ական չէ : հարկ չկայ : Զգիտացող ոչ ոք կայ մեր
մէջ վարագոյ վանուց երկարօրեայ խառնու-
թիւնները : Ս. երեսօտեան վանուց չբարկոյց
վիճակը, Արմաշու վանուց մէջ պատահած ան-
համար և ամենախի իրաւութիւնները Մեր վան-
քերը փոխանակ նշանաւոր եկամուտ մը ընծա-
յելու ազգին, ունեցածն ալ յանդէս() փը-
նացունելու գաղտնաբերուած են երբեք չհա-
մուրդուող և կրթութիւն ծառայելու վրայ :

Երբեք չհամար իր ազգային տուրքը կանոնա-
ւոր վիճակի մը վերածելով ուսումնասիրեալ
ընդհանրական օգնելու վրայ : Քրիստոս գեղ. պա-
տերազմի տուժալից աջ լուծը վրայէն չընտան
վիճակները իրաւաւ և ազգային թաղարն կը-
կառուցանէ : . . . իսկ մենք չուարեցանք և ա-
պա չկրթեցանք Զէյթունի և Գոտակի խնդիր-
ներով : . . . ալ ուղեղնիս ատենց համար սպանե-
ցինք, ալ ինչ ունիմք մտածելու . . . :

Բալուի կողմերը Բիւրաի մը սպանման պատ-
ճառաւ մեր ազգայիններէն վեց հոգի ձերբա-
կալուելով բանտարկուած էին : Այս անգամ կը
լսուի թէ ատենցմէ մին բանտին մէջ մեռած և
ուրիշ մ'ալ ծանր կերպիւ հիւանդացած է :
Բիւրաի մը սպանման պատճառաւ վեց Հայոց
բանտարկութիւնն ու աղաւթի թշուառութեց
ենթարկուիլը զարմանալի է, մինչդեռ Հայաս-
տանի մէջ անքնդ հատ Բիւրաերու կողմանէ
սպաննուած Հայոց համար երբեք Բիւրա մը իր
պատիւը կրած չէ :

—Վանէն կըլլուի թէ, ութը հարիւրի չափ
ձիւնոր Բիւրաերու Պաշտօնի վրայ յարձակել են,
սակայն վախճանն անյայտ է գեղ. և Նորէն զօրք
կըսպատուի ի վան : Վանայ կուսակալը Պաշտ-
մին երկրորդ օրը տաճիկներէ բաղկացեալ ժո-
ղով մը կազմէր է, սակայն գաղտնի ըլլալուն
պատճառաւ նպատակն անմանօթ մնացած է :
—Սըվաղի մէջ Գոտակալ իւղի խնդրոյն նկատ-

մամբ բարձր. Պատրիարք Հայրը կրկին Բագրի-
մը զրկէր է Բ. Դրան, որով կառավարութիւնը
ծանուցէր է թէ արժա. Տ. կարապետ Հօր հրա-
մանադիր մը պիտի տայ այս մասին :

—Մարաշէն կ'իմացունեն թէ Սայիտ փաշա և
Նուրեան Էֆէնտի հոն հասնելէն առաջ երեքօր
Այնթապ մնացէր են, և քանի մը տեղական
խնդիրներով զբաղէր են : Եթէ Սայիտ փաշայի
հրահանգները փոփոխութիւն չկրեն, լըստ բա-
ւականի գահացոցն էն եղէր :

Մինչդեռ Մարաշի բանտարկելոց արձակումը
վերջնապէս որոշուած էր, այժմ 15 օր ևս եր-
կարաձգուէր է : Քանի մը օրուան մէջ յիշեալ
գոմիսէրք Զէյթուն պիտի երթան :

(Թէրճէմալ Էֆէնտի .)

Անցեալները Անթիստանեանք Ս. Յովհան
Ռսկերեան եկեղեցւոյ մէջ ընդհանուր ժողով
պումարելով, Բ. Դրան կողմանէ իրենց զրկուած
գիրը կըկարդան, և սոյն վրայ տրամադրութե
համեմատ տաժամանակեայ իտարէ Մէճիսի
անուամբ ժողով մը կըկազմեն : որոյ անդամ
կընտրուին Միհրան Պէյ Տիւզ, Չամիշ Բովհանէս
էֆէնտի, Կէօզէ Կատէ Բակոր Էֆէնտի, Սագըզ
Յովհանէս Էֆէնտի, Բորթուզալ Միլաթ Էֆ.
Պետան Պէյ, Բէքմէս Կոմիտաս Էֆ. Մանուէլ-
եան Մանուէլ Էֆ. Մուրատեան Մկրտիչ Էֆէնտի,
Տօքթօր Գարրիէլ Պէյ Սեւեան, Հանըմեան Յա-
կոր Էֆ. Էլմասեան Զենոբ Էֆէնտի : Ապա սոյն
անձանց անուանք գրի առնելով Բ. Դուռը կը-
զրկեն ի վաւերացումն :

Այս ընտրութիւնը լրանալէ ետեւ երեսփոխա-
նական ժողովոյ անդամոց ընտրութեան վրայ
կընտրեցին Կալիքի, սակայն կ'որոշեն որ մինչև որ
ազգային գործերն կարգի մտնեն, երեք ամիս
անդամ մը ընդհանուր ժողով գումարեն, նաեւ
քստ հարկին հարիւր անձանց առաջարկութեամբ
յիշեալ ընդհանուր ժողովը գումարեն :

Նոյնպէս, իրենց ազգային գործոց բարե-
կարգութեան մասին արգէն ունեցած կանոնա-
գրութիւններն բարեփոխելու համար, կ'որոշեն
իտարէ Մէճիսիէն դատ գոմիսիս մը կազմել :

Սոյն ընդհանուր ժողովոյ խորհրդակցութեան
միջոցին, Անթիստանեանց կաթողիկոս վեհա-
ճակոր Պահտիարեանի կողմանէ նամակ մը կ'հաս-
նի, զոր կըկարդան հրապարակաւ : Վեհափա-
ռը այս նամակաւ կըխրատէր զիրենք, որ միշտ
միտքան մնալով իրենց գաղտնի համար անվհատ
աշխատին, կըպատուիրէր ժողովրդեան որ իրեն
մեծերուն հնազանդի և ընդհանուրին համար
մաղթանքներ կ'ուղղէր :

Այս նամակէն մեծապէս շնորհակալ եղաւ
ընդհանրութիւնը, որով որոշեցին որ իրենց
յարգանաց և շնորհակալեաց հաւատարմք ձօնե-
լու համար երեւելիներէն երկու անձներ յիշեալ
վեհափառին ներկայանան :

ՎԵՃԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ Ս. ՊԱՊԸ

Միտիսն Գաթիքի անուն յազիրը, Հայ—կա-
թողիկներու պատրիարքութեան Պէրաթը Հա-
սունեանի տրուած ըլլալուն պատճառաւ, Ս.
Պապին կողմանէ առ վեհա. Սուլթան զրկուած
շնորհակալութեան գրոյն փոխարէն, ՆորինՎե-
հափառութեան զրկած թարգմանութիւնը հը-
րատարակած է :

Ահաւասիկ յիշեալ պատասխանագիրը .
«Գերա. Հասուն Էֆէնտի Հայ կաթողիկաց
Պատրիարք ճանչուելուն աղագաւ, զգացած
խնդութիւննիդ ինձի իմացունելու համար՝ ձեր
Սրբազնութեան կողմանէ շրկուած բարեկամա-

կան նամակն ընդունեցի : Այս առթիւ, ձեր
յայտած յարգանաց և սիրոյ զգացման համար
շնորհակալութիւնս կըյայտնեմ ձեր Սրբազնու-
թեան, և ձեր փառաց երջանկութեան համար
բարեմաղթու ըլլալ իմ կողմանէ ձեր Սրբազ-
նութեան կըյայտնեմ, և ապահով եմ որ գեր-
Հասուն Էֆէնտին, ձեր Սրբազնութեան բարի
նպատակներով տողորեալ, հաւատարմարար
պաշտօն պիտի վարէ :—Անկեղծ յարգանացս
սոյն զգացումը ընդունելով, կըբաղձամ որ ձեր
ընտիր և նուիրական սիրոյ զգացումները շարու-
նակաբար ունենաք :—Տուեալ ի կոստանդնու-
պօլիս, յամսոյն Ծապան : (Օգոստոս 1879)

ՀԱՄԻՏ

Ասորքէն Էֆէնտի և Կաթողիկոս Բարեկամ մը
Լէն ԺԳ Պապ :

(Մանդ Էֆէնտի)

Անցեալ տրեքշաբթի օր բարձրաւ սրբազան
Պատրիարք Հայրը, հետն առնելով երկու վար-
դապետ և պահակներ, Ֆէնէրի Բունաց Պատ-
րիարքարանը կ'երթայ, յայցելութիւն Նորին
Սրբազնութեան Եղեւթիմ Պատրիարքի : Մեծ
պատուով կընդունուի Ն. ամենապատուութիւն
Ներսէս Պատրիարք Հայրը : Մէկ ժամու չափ
տեսակցութեան ետեւ երկու Պատրիարք Հայրե-
րը Բունաց պատրիարքարանի նոր շէնքերը աչ-
քէ կ'անցունեն, Բետոյ Ս. Պատրիարք Հայրը
երեսօտեան յունաց Պատրիարքին այցելութիւն
մը կուտայ, ուր նմանապէս չափազանց պատ-
ուով կընդունուի, և կէս ժամու չափ տեսակ-
ցութեան ետեւ կ'մեկնի :

—Ղմենապատիւ խորմեան սրբազան արքե-
պիսկոպոս անցեալ տրեքշաբթի օր Կ. Պօլսէն
մեկնելով վարագոյ վանք աւղեւորէր է :

Հայրէնի հետեւեալ կըհրատարակէ .

Մուշէն բարբարիկ ցեղերու կողմանէ ի գործ
դրուած սպանութեանց և աւարառութեանց
ընդարձակ տեղեկագիր մը եկած է յազգային
Պատրիարքարան, ստորագրեալ Մոյ գերա-
ւաճիորդէն և գաւառական վարչութեան :

Սոյն տեղեկագիրը 59 սպանութեանց դէպք
կըյիշատակէ որք սոսկալի եղանակաւ ի գործ
դրուած են մէկ տարին աւելի միջոցի մէջ և
որոց մին չափազանց քստմնելի և եղեւորական
է և հետեւեալ կերպով կատարուած է :

Զօրաց հացի Գոնթիթի Մշեցի հացագործ
Բարութիւն անուն ազգային մը իտարէի ժողո-
վէն պահանջը ունենալով կընեկայանայ դրամ
խնդրելու համար, Էֆէնտի մահապաշտէնի
փոխանորդի պաշտօն վարող Սարաֆ օղլու իպ-
րահիմ ազա կըբարկանայ Բարութիւնի դէմ և
խաչին կըհայհոյէ : Բարութիւն անեղոյն աղգա-
յին վարչութեան կըբողոքէ որ տեղեկագիր մը
խմբագրելով և ստորագրելով յատկապէս Մշեցի
Մեքոն անուն Հայու մը հետ կարին կըզրկէ
Մշոյ գերա. առաջնորդին որ նոյն միջոցին ի
կարին կըզանուի եղբւր բարեկարգութեանց
պատճառաւ : Մշեցի Մեքոն Մուշէն 5 ժամ
հեռաւորութեամբ Զարպազոր ըսուած տեղը
խումբ մը զինեալ Բիւրաերու կըհանդիպի որոնք
վրան կըյարձակին, քիթը և ականները կը
կտրեն, գլուխը և երեսը կըգերծեն և արան-
դամ բերանը դնելով դիակնացեալ կըթողուն
զայն : Իսկ վրան գտնուած պաշտօնական գրու-
թիւնները կառնուն կըհեռանան :

Մշոյ գերա. առաջնորդը և գաւառական վար-
չութիւնը այս և ասոր նման անլուր խժդժու-
թեանց գործուիլը և յանցաւորաց ու սպանչաց
հակառակ սաստկագոյն բողոքանաց անպա-
տի մնալը տեսնելով, նոյնպէս նկատելով որ

եկեղեցիքն տաճար մեր սրբութեան և նուիրական վայելքը անարգել կը պղծուին, աղջկունք և մանկամարդ կանայք կը լլկուին կը բռնարարուին, ոչխար, եղ, կով և տաւար կը յափշտակուին կը կողոպտուին, հասարակաց ճամբաներն բնաւ ապահովութիւն չկայ, այսինքն որ արձակ համարձակ սպանութիւնք կը գործուին և երբ բողոք կը լինի, բնաւ ըսող չկայ և տեղական կառավարութիւնք այսպիսեալ կը քաջալերեն յանցաւորները ի մնաս երկրին և ժողովրդեան, բողոքովին յուսահատեալ և շուարեալ հրաժարականին զրկած են յԱզգ. Պատրիարքարան:

Ս. Պատրիարք Հայրը պատասխան գրեց Մշո գերա. Առաջնորդին և գաւառական վարչութեան թէ անկարելի է հրաժարականն ընդունիլ. ուստի պէտք է որ պաշտօնին շարունակեն ամենայն անձնութեամբ և համբերութեամբ:

Իսկ վերոյիշեալ հարստահարութեանց մասին աղբու թաղերի մը գրեց առ Բ. Դուռն, նոյնպէս և շրջաբերական մը առ Եւրոպական դեսպանս մայրաքաղաքին:

Պրուսայէն հասած վերջին նամակներն, Պ. Ֆուրնիէի յիշեալ քաղաքն ըրած այցելութեանը վրայօք կարեւոր տեղեկութիւններ կուտան:

Գաղղիոյ դեսպանը ամայս շին Պրուսա հասնելով, հետեւեալ օրը կուսակալը և մեր ուշուցեաց առաջնորդներն այցելութեան կերթան Ն. Վսեմութեան: Նոյն երեկոյին Պ. Ֆուրնիէ իւր Ա. թարգմանին հետ փոխադարձ այցելութեան կ'դայ Բարթոլոմէոս սրբազանին և մէկ ժամու չափ տեսակցելէն յետոյ կը մնան: Բաշորք օրը Պ. Ֆուրնիէ իւր տիկնոջ հետ, ի միասին ունենալով նա ևս կուսակալ Ահմէտ վէֆիք փաշան կրկին այցելութեան կ'դայ առաջնորդ սրբազանին, որնոր կանխաւ գալուստին իմանալով եկեղեցական դասն զգեստաւորեալ և 500ի չափ երկու սեռէ գարդգական ուսանողք հետն առած, դեսպանը գիմաւորելու կերթայ:

Առաջնորդն մինչև մօտն երթալով առաջին կառքէն անձամբ վար կիջնցնէ զկուսակալն և զՊ. Ֆուրնիէ, որու իւր թեք տալով, Ահմէտ վէֆիք փաշա ալ տիկին Ֆուրնիէի թեք մօտնելով եկեղեցի կ'մտնեն մանկանց երգեցողութեամբ, և նոյն հանդիսին, յԱռաջնորդարան կեննեն, ուր Առաջնորդ սրբազանին կողմէն գաղղ. լեզուաւ ուղերձ մը կ'կարդացուի, յորում՝ «Գաղղիական աղբը Արեւելեան քրիստոնէից ճշմարտ պաշտպանը կ'հռչակուէր:

Սոյն ուղերձին կ'պատասխանեն նոյնպէս գաղղ. լեզուաւ Պ. Ֆուրնիէ և կուսակալը: Գեսպանը մեկնելու առնել իւր խորին գոհունակութիւնը յայտնելով գեր. Առաջնորդ Ն. Սրբազնութեան լուսանկար պատկերն ունենալու փափաք կը յայտնէ և կ'ստանայ զայն: Լրագիր

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Պաշտօնէութեան մէջ նոր փոփոխութիւն եղած է գարձեալ, զոր հետեւեալ կերպիւ կրնելուկայէ տեղւոյ պաշտօնական թերթը: Այսինքն Սայրտ փաշա՝ Մեծ—վէզիր, Մահմետ Նէտիմ փաշա՝ ներքին գործոց պաշտօնայ, Ճէփտէթ փաշա՝ արտաքին գործոց պաշտօնայ, Սալա փաշա՝ արտաքին գործոց պաշտօնայ, Գատիր փաշա՝ հասարակաց շինութեան (նափիա) և Առեւտրական գործոց պաշտօնայ, Սալֆէթ փաշա՝ վերանորոգութեանց պաշտօնայ, Արիֆի փաշա՝ Պետական խորհրդոյ նախագահ:

Ուրախալի է որ նոր պաշտօնէութիւն մը ևս կը տեսնուի վերոգրեալ շարքին մէջ, այն է վերանորոգութեանց պաշտօնէութիւնը, որոյ կազմութիւնը մեծ գիւրութիւն պիտի առնէ Բ. Դրան ի մասին ամբողջ աշխարհէ բաղձացեալ բարենորոգութեանց, վասն զի այս մասին յատուկ պաշտօնէութեան գոյութիւնը չպիտի զբաղէ բովանդակ կառավարութիւնը և մանաւանդ մասնաւոր պարտաւորութիւն մը ըլլալով յիշեալ պաշտօնէութեան, վերանորոգութեանց գործերը չպիտի ընդհատին զանազան արդելքներու պատահմամբ, ինչպէս որ մինչև հիմա կը լլայնի կրնայ ուրեմն նոր դարաշրջան մը հա-

մարուիլ այս ընթացքը օսմանեան պետութեան համար:

ԹԵՐԶԻԱՆԷ ՖԵՔԷՐ Հետեւեալը հրատարակած է:

Ա Ս Ի Ա

Բարեկարգութեան ասֆէնք
«Թայք լրագրին» Կ. Պոլսոյ իմ զիտակից Պ. Մաքէնզի Ուօլլէյի կողմանէ քաջուած հետագայ երկար հեռագիրը, յիշեալ լրագրոյն Սեպտ. 7 թիւէն կը թարգմանեմ:

Կ. Պոլս, 3 Հոկտեմբեր

«Թ.քր.—Ասիոյ մէջ բարեկարգութեան ի գործ դրուելուն յոյսերը անհիմն կը թուին, և ընդհանրապէս կը վախցուի որ Բ. Դրան նպատակը կարելի եղածին չափ քիչ բան ընել է: Յիշատի է թէ, որ շէնքի լէյքոս ինչ աստիճան գծուարութիւններ քաջեց անցեալ տարի ըրտ Սալիդպուրի բարեկարգութեան մասին թեթեւաշարկութիւնները Բ. Դրան գոնէ հիմամբ ընդունել տալու համար, և հիմա կը տեսնուի որ Բ. Դրան այն ատեն ընդունած երկրայական ապահովութեանց մեծ մասը անգործադրելի կը մնան: Ըրտ Սալիդպուրի յատկապէս յանձնարարած երեք կէտերը հետեւեալներն էին, այսինքն վերաքննական ատեաններ (իսթինաֆ մահքէմէլէրի) հիմնել, գանձայի տեսուչներ (մալիէ միւֆէթիթիլէրի) կարգել և զօրաւոր Զառաքմա մը կազմել: Վերաքննական ատեաններ հիմնելու տեղ Բ. Դուռը առաջարկեց Սրբարութեան գործոց վերատեսուչներ (տալիյէ միւֆէթիթիլէրի) կարգել, և այս առաջարկը ընդունուեցաւ Անգլիոյ դեսպանին կողմանէ, բայց երբ յայտնուեցաւ Բ. Դրան թէ պէտք է որ ի գործ դրուի այս որոշումը, Բ. Դուռը երբեք քիչ շատ լեզու գիտցող և գաղտնաբանական գործերու հմուտ օտար անձ մը չգտաւ, և հետեւեալ բան մ'ալ չեղաւ:

«Գանձայի բարեկարգութիւնը ևս քիչ տարբերութեամբ, բայց գործադրութեան մասին միեւնոյն ընթացիւք եղաւ: Բ. Դուռը ինքզինքը օտար ճնշումի տակ գործելու ստիպուած ցցուներու համար, ըստ իւր սովորութեան այս բարեկարգութիւնը ամբողջ տէրութեան մէջ ընդհանրացուց, և ապա առաջարկեց Անգլիոյ, Ֆրանսայի և Իտալիոյ տէրութեանց, որ վերատեսուչութեան պաշտօնի կարգելու համար եւրոպացիներ յանձնարարեն իրեն: Անգլիա երեք, և Ֆրանսա և կամ 2 հոգի յանձնարարեցին, և պատմուածին նայելով իտալիա խոյս տուաւ: Բ. Դուռը մէկ Անգլիացի և մէկ ալ Գաղղիացի ընտրեց, և այս նոր տեսակ պաշտօնայք երեք կարգի բաժնուեցուն համար, Բ. Դուռը այս օտարականները առաջին կարգի ընտրեց և մեծարեց զանոնք: Թէ և չէր յուսացուէր, որ երկու օտար անհատներ կարող ըլլային տէրութեմ գանձուց վարչութեան մէջ բարեկարգութիւն մուծանել, սակայն աղբեցութեան տէր անձինք կը կարծէին թէ օտարականաց այս ընտրութիւնը Բ. Դրան գէպի բարեկարգութիւն քաջ առնելուն ապացոյց է: Տէրութեան երկիրները գանձային 7 մեծ շրջանակներու բաժնուած էին (1) և բնականաբար առաջին կարգի վերատեսուչները մեծ աղբեցութիւն պիտի ունենային իւրաքանչիւրն ամբողջ մէկ շրջանակին վրայ: Այս կերպով այդ երկու օտարականաց ալ ամբողջ տէրութեան երկիրներուն երրորդ մասին վրայ աղբեցութիւնը պիտի ըլլար ըսել էր:

«Այսու ամենայնիւ, Բ. Դուռը երբեք մտադիր չէր այդ աստիճան օտար միջամտութեան թոյլ տալ: Նպատակ մը ունէր զոր հիմա ի հրապարակ հանեց, և իրապէս գանձային բարեկարգութիւն ըլլալ յուսացուցեալ զարմանքի մէջ թողլով, յոյսերն ի դերեւ հանեց: Այս նպատակը այն էր, որ առաջին կարգի վերատեսուչ բողոքներուն վրայ ընդհանուր վերատեսուչ անունով եօթը հոգի կը կարգուին, որք ամենքն ալ բուն Տաճիկ են: Արդ, առաջին

(1) Թայմաի քղաքից ջլիշեր, որ Էրզրումի, Վանայ, Տրապիզոնի եւ Գաւրամուքի գաւառները զուրս ձգուած են այդ գանձային շրջանակներէն:

(Թ. Է.)

կարգի վերատեսուչութեան արժանացող օտարականք՝ ընդհանուր վերատեսուչ հրամանին տակ գանձուեան համար, խիստ քիչ աղբեցութիւն պիտի ունենան, և այ վարպետութիւնը մտածող անձինք կրնան շնորհակալ ըլլալ զեցան անգամ մը ևս օտար հսկողութենէ զերծ մնալ: Միւս կողմանէ, այս պաշտօնին կ'այն մէկ Անգլիացի իր տէրութեան արտօնութեամբ հրաժարականը զրկեց:

«Գալով միւս բարեկարգութեան, այսինքն զօրաւոր Զառաքմա՝ կազմութեան, այս մասին ըսելիք չաւրան մը չկայ: Բ. Դրան անհաւաքութեան միջոցաւ բաւական ինքնօրինութիւն ստացող և տաւրքերէ գոյացած ստ. ը հանապազ Կ. Պոլս վերակերու փառաբան գէմ պաշտպանուող Էրիտ կղզիին մէջ քիչ շատ զօրաւոր Զառաքմա մը կազմուեցաւ: Միտհաթ փաշա Սալիդպուրի մէջ, և Անգլիացի Պլէնթըն հրամանատարին օգնութեամբ ալ Բ. Դուռը փաշա Էրիտի մէջ բաւական գործ տեսան այս մասին, սակայն Փոքր—Ասիոյ մասին երկրայական խոստումներէ զատ բան մը չկայ մինչև հիմա: Երկու տարի առաջ, օսմանեան կառավարութեան ծառայութեան մէջ ընդունուող 18—20 Անգլիացի զինուորներէն հալու թէ 3—4 հատը կը տեղաւորուին, և ասոնց ալ երբեք մէկը մեր շնորհիւ խանութեան տակ գանձուող կողմերը չըրկուիր: Յանգիմանութեան օրոք անի այս անհոգութեան ամենէ մեծ վախճաններէն քանին երբ իմացուցած եմ ձեզ ատեն ատեն, և միշտ ալ երբ անք կը ըսեմ:

«Օրինակի համար, Աստաղաղարի մէջ, թէ Գրիստոնեայ և թէ Միսիսիան, վերջին տեղամիջերնց կողմը զրկուող 43,000 աւազակ Չէքքէներուն երեսէն մինչև հիմա տաւապանաց և ահագողի մէջ են: Յիշեալ քաղաքին գաղմագամը անցեալները իվմիտի ճամբուն վրայ կը զոպտուելով սպաննուեցաւ, սակայն մինչև հիմա չլսեցի որ, տպահովութեան համար, այն 17 թշուառ զապլթիներուն բոտ բաւականի յաւելում մը ըլլալու համար զինուոր զրկուէր իր ուղիւ վիճակի մէջ մնացած յիշեալ քաղաքը:

«Փոքր—Ասիոյ մէջ եթէ երեւալու բան մը կայ այն ալ Ապետտին Պէյի բռնած անապառնութեանցն է (1): Սա գոմիսի պաշտօնի Գիւրտիսն պիտի լինուած էր և ապա Սըլադի վաթկարգութեան: Այս անձը, իրենց ոճիրներով անուանի եղող 30—40 Գիւրտ գլխաւորները բռնեց և աքսորեց, և ասոր հետեւանքն եղաւ գոնէ քիչ շատ այն կողմերու ընչից և կենաց ապահովութիւնը առայժմ: (2)

ԹԱՆ Լրագիրը Կ. Պոլսէն նամակ մը կը հրատարակէ որոյ մէջ հետեւեալ տողերը կը կարդացուին: «... Ալմանիոյ տէրութեան» Աւստրիոյ հետ ըրած վերջին միութեան ունենալիք հետեւանքին վրայ մեծ մտաւանջութեամբ հարցուններ կը լլան Բ. Դրան մէջ, և ամեն ոք կը հաւատայ թէ, այս միութիւնը օսմանեան տէրութեան համար օգտաւէտ պիտի ըլլայ: Վերջապէս կը հասկցուի որ, Աւստրիա Նոյի—Բաղարի մէջ չպիտի մնայ, և Պէրլինէն եկող պահպանողական զօրութեան պիտի հետեւի, և վերապէս մինչև Պալքաններու թերակղզոյն օսմանեան գաւառները պիտի տարածէ իւր իշխանութիւնը: «... Սըր Օսթըն Լէյքոսի գէպի Սիւրէա ըրած ճամբորդութեան համար զանազան մեկնութիւններ կը տրուին, և երկար ատենէ իվեր սըր Լէյքոսի, Գաղղիոյ միւս տէրութիւններէ աւելի աղբեցութիւն ունեցած երկիրներու ըրած այցելութիւնը զարմանալի բան մը կը թուի: Նաեւ, Կ. Պոլսոյ մէջ կը խօսուի թէ այս ճամբորդութիւնը Ալմանիոյ և Աւստրիոյ միութիւնը տեղի տուած է, և թէ Անգլիա ուրիշ քաղաքականութիւն մը ձեռք առած է, և եթէ օսմանեան տէրութեան մնացորդ երկիրները բաժան-

(1) Միւր վերջը ջ'եկաւ:
(2) Յաւայի է որ, Ապետտին փաշայի բոտ բարեկարգութիւնը փոքրիկ բանք եւ ոչ թ. իմանական բարեկարգութիւններ ըլլալուն համար Տիարպիթի վիլայէթին մէջ կրկին հարստամարտեանց սկիզբն առնուի իւր կը տրուի: (Թ. Է.)

ման ենթարկուին, ինչպէս որ Աւստրիա Պալ-
քաններու թիւակալին, Նոյնպէս Անգլիա ևս
Ալմանիոյ հաւանութեամբ ամբողջ Արիական
Տնտեսական պիտի դրաւ իրեն համար ։

Աւստրիոյ արտաքին գործոց պաշտօնէութիւն
գործակալաւորք Հոկտ. 9 կէսօրին Պալքալի պա-
լատը Ներկայացան, կոմս Անտրասիի իրենց յար-
գանքը մատուցանելու համար ։ Պարօն տը Գա-
լիս, ուղեւալ ձայնիւ եռանդուն ճառախօսու-
թիւն մը քննարկելու, ուր կոմս Անտրասիի նշանաւոր
յառկո թիւանց և տէրութեան մատուցած մե-
ծամեծ ծառայութեանց վրայ խօսելէ ետեւ, ի-
րեն Ներկայացող պաշտօնատարց յարգանաց
զգացումներն արտայայտեց ։ Պարօն տը Գալիս
յապապցոյց խորին յարգանաց և անձնութեան
թեան բոլոր ներկայ գտնուողներու՝ ուղերձ մը
մատուց նախորդ պաշտօնէին որ ստորագրեալ
էր արտաքին պաշտօնէութեան բովանդակ
պաշտօնատեարց կողմանէ ։

Անտրասի կոմսը նոյնպէս յուղեալ կերպով
երկար ճառախօսութեամբ մը պատասխանեց,
որով շնորհակալութիւնն յայտնեց բոլոր պաշ-
տօնատեարց որ օգնած էին իրեն և փոյթ ցու-
ցուցած, մասնաւորապէս անոնց որք անմիջա-
կան կերպով իր հետ կ'աշխատէին ։ Իր առող-
ջութիւնն հագալու կարեւորութիւնը ստիպեց
զինքն պաշտօնէ քաշուիլ ։

Կոմս Անտրասի վերջացուցելով իր խօսքը Ը-
սաւ թէ, կայսրը իրեն յաջորդ մարդ մը որոշած
էր որ, թէ պաշտօնէութեան մէջ և թէ յար-
տաքս, իր հետն էր միևնոյն դրօշին տակ և մի
և նոյն գաղափարները կրտածէր ։

Յայտնեց նաև նոյն համոզումը թէ Պարօն
Հայմէրլէի և իւր ստորակարգերոց համար լաւ
ժամանակներ հասած են և պետութեան վտանգ
սպառնալից ատեններն անցած են ։

Աղաչեց զպաշտօնատարս որ Պարօն Հայմէրլէի
օժանդակեն ինչպէս որ իրեն ։

Անմիջապէս յետո, պաշտօնէութեան մարմինը
Պարօն Հայմէրլէի ներկայացաւ ։

Նոր պաշտօնեան, Պարօն տը Գալիսի ճառա-
խօսութեան պատասխանելով շնորհակալութիւն
յայտնեց յիշելով նաև Անտրասի կոմսին արժա-
նիքը, որոյ ութ տարուան գործողութիւնը մեծ
յաջողութեամբ պատկուցաւ ։ Յաւելեց նաև
թէ իր նախորդին գործը պիտի շարունակէ և
թէ, վասն այս մեծ փոփոխութիւն ունի իր ըս-
տորակարգերոց գործակցութեան վրայ ։

Անտրասի կոմսին առ Պարօն Հայմէրլէ, յանձ-
նարարած քաղաքականութիւնը մեծամեծ զբո-
ւաւրութիւններու պիտի հանդիպի, կըսեն
հունգարական լրագիրք ։

Սոյն լրագիրք, հաստատելով թէ Աւստրիոյ
մէջ բոլոր քաղաքական կուսակցութիւնք կը-
բաղձան որ տէրութիւնը շարունակէ Ալմանիոյ
հետ իր մտերմական յարաբերութիւնները, կը
անուղեն որ կայսրը մերձաւոր կուսակցութիւն
մ'ալ կայ որ կըպնդէ Ռուսիոյ հետ ևս հոս ա-
սարապէս մտերմական յարաբերութիւնները
շարունակել, Հետեւաբար լրագիրք կըխրատեն
Պարօն Հայմէրլէ անտես մնալ սոյն կուսակցու-
թեան մեքենայութեանց ։

Շքօտրայէն յիշ. 25 թուականաւ Գօլթ-Բօն-
պան Բալթիկ լրագրոյ ուղղուած գրութեան մը
նայելով Միլիտարիստներու գլխաւոր Բրէնք-Տօ-
տա իշխանը Շքօտրա հասնելու վրայ է, անտի
կ. Պօլիս երթալու համար Բրէնք-Տօտա խնդ-
րագիր մը կըտանի ի կ. Պօլիս, ստորագրեալ իր
երկրին մեծամեծներէն խնդրագիրը կըպահան-
ջէ որ Բրէնք-Տօտաի նախորդն ու հայրն եղող
Պիպ-Տօտաի ունեցած առանձնաշնորհութիւնք
իր վրայ գառնան Բ. Գրան շնորհիւ ։ Գրութեան
հեղինակը կըսէ նաև թէ Բրէնք-Տօտաի այս
ընթացքը օտար ազգեցութեան արդիւնքն է ։
— Գօլթ-Բօնպան Բալթիկ կըպատմէ թէ Գարաւաղ-
ցիք, Պէրլինի գօնկրէին իրենց որոշած կուզի-
նէին և Բլեյվան գրաւելու վրայ են, և ինչպէս
որ Ալպանացիք Անտրիքիւնի կողմերը մեծ զօ-
րութիւններ կըկեդրոնաւորեն և կըսպառնան
թոյլ չտալ գաղտնադրոց յիշեալ տեղերը գը-

րաւել, ուստի այս վերջինները կըպատրաստուին
ի պատերազմ ընդդէմ Ալպանացոց և մեծ
քանակութեամբ պաշարներ կըտանին հոն ։

— Կ. Պօլսէն նոյն լրագրին հետագայ տողերը
գրուած են ։

« Տասնհինգ օր առաջ քանի մը հեղինակ
սեղանաւորներ և վաճառականներ՝ Բէրա գաղ-
ղական հիւպատոսին երթալով կըսեն թէ « Բո-
րիէ » Օրիէն լրագրին խմբագրապետը՝ երկար ա-
տենէ ի վեր Յունաստանի նկատմամբ աննպաստ
և թշնամական յօդուածներ հրատարակելով,
եթէ այս սկզբան վրայ մնայ քիչ օրուան մէջ
պիտի սպաննուի ։ Ալ չեմք կարող յիշեալ լրա-
գրին ներողամտ ըլլալ և մեր փողովրդեան
զայրոյթը զսպել ։ Չանի սպաննելու համար եղած
առաջին փորձը ապարդիւն ելաւ թէև, սակայն
եթէ երկրորդ անգամ փորձ ըլլուի անպատճառ
պիտի սպաննուի ։ Ուստի կըխնդրեմք որ յիշեալ
լրագրոյ խմբագրին բարեհաճիք խմացուցել մեր
այս ազգարարութիւնը ։ »

Նորին վսեմութիւն Արարհամփաշա հրաժա-
րած է փոխարքայի ներկայացուցիչնէ ի Պօլիս,
իւր տեղ սրոշուած է կարգել Բէթիք Պէյ ։ Ա-
ղէքսանդրիոյ կառավարիչ Ալի-Սատրպէ մաք-
սատան վերադառնալ կարգուած է փոխանակ
Սքրիվենար փաշայի որ գաղափար է իր պաշտօ-
նէն ։ Չիւլֆիքար փաշա Աղէքսանդրիոյ կառա-
վարիչ անուանեցաւ ։

Վազը լրագիրը կըսէ թէ, նոր փոխառու-
թիւնը յաջողեցաւ ։ Այս փոխառութիւնը ա-
պահովուած է պանքայի, Սօսիթիէ Ժէնէրալի,
միւսիւ Զարիֆիի, միւսիւ Ալֆրիտիի և միւսիւ
Ֆերնանդէի կողմանէ ։ Փոխառութիւնը 1500,
000 ոսկի է որոյ փոխարէն մաքսերու հասոյթը
գրուած է ։ Փորձի համար վեց ամսոյ շափ փո-
խատուները ձեռք պիտի առնուն Բուսումաթի
վարչութիւնը ։

(Բէթիք Գալիս)

Միւսլիմանութեան կրօնից սկզբունքները
թշնամանող Ահմէտ էֆէնտի անուն անձը գա-
տաղարտաքոյ կարգի դատարանը՝ գալ շաքաթ
պիտի բացուի Ենիս-Իւլ-Խալափ Գուռը ։

Թէրէֆէն Հաֆիզալի հետագայ ծառայութիւն
նը կուտայ յիշեալ Ահմէտ էֆէնտի վրայ ։

« Ահմէտ էֆէնտի Սըլադի կողմերէն Գէորգիւմ
ըսուած գիւղէն է ։ Իւր Էօլէր եղբորը հետ կ.
Պօլիս եկաւ 1274 (1858)ին ։ Երկու եղբարք Սիւ-
լէյմանլիէի Մէտրէսէն մտան ուսումն ստանալու
համար ։ Երկուքն ալ խիստ անխոյժ էին մաք-
րութեան և Ապոստոլի մասին զորս սլաւոն
կատարել Միւսլիմանք ։ Ուստի արտաքսուեցան
ատենք Մէտրէսէնէն ։ Էօմէր յաջողեցաւ այն
ատեն վարչական պաշտօն մը ձեռք ձգել, սա-
կայն անկէ ալ վաճառեցաւ կրկին իր վատ ըն-
թացքին պատճառաւ ։ Այժմ երկու տարի կայ
որ մեռած է ։ »

Ահմէտ էֆէնտի յաջողեցաւ կրկին Սուլթան
պալատի Մէտրէսէն մտնելու, և շնորհիւ
Շիրվանի զատէ Վէզիրին՝ որ այն տուն իւրացաւ
էր գեռ, պաշտօն մ'ալ ձեռք ձգեց ի վերջոյ
Պէյի քիւնի գօրոյցին դատաւոր կարգուեցաւ,
և աւելի ետեւ խմբիկեանի գօրոյցին ։ Այս վեր-
ջին պաշտօնին մէջ գտնուած տունն ահա գոր-
ծեց մեղքը որոյ համար դատաւորանի եսթար-
կուած է ։

Լա թիւ-Էֆէ մէջ հետեւեալը կըկարդացուի ։

Հնդկատանի միւսլիմանները, նախ պատե-
րազմական ծախուց և ապա ի նպաստ փրաւո-
րելոց և գաղթականաց մեծագումար օգնու-
թիւններ զրկելէ ետեւ ի կ. Պօլիս, հիմա ալ Գալ-
թի բարձման համար հանգանակութիւն բացած
են ։ Այս օրուան լրագիրք հանգանակութեան
առաջին ցանկը կըհրատարակեն ։ Գումարը 30,
931 ռուբլի կըհասնի ։ Այս դուռմարը օսմանեան
ոսկիի վերածուելով, Գալթի բարձման գօմիոսի
յանձնուեցաւ Հնդկական ներկայացուցիչ Հիւ-
սէին էֆէնտիի կողմանէ ։

Սթամպուլ կըսէ,
Կիմանամք թէ Հայ բողոքականաց գլխաւոր
Մաթէոսեան էֆէնտի, Բ. Գումէն հրաման խնդ-
րած և ստացած է այս օրերուս փոքր-Սօսիոյ
մէջ քննութեան համար շրջան մը ընելու մասին
ուր բողոքականք տրտունջ բարձր են ի դար-
ձին տեղեկագիր մը շինելով Բ. Գրան պիտի մա-
տուցանէ և պէտք եղած դարմանին գործա-
դրութիւնը պիտի խնդրէ ։ Կիմանամք նաև թէ
Ն. Սրբազնութիւն Ներսէս Պատրիարքն Հայոց,
առողջութիւնը վերահաստատուելուն պէս նման
օրինակ արտօնութիւն մը պիտի պահանջէ այդ-
պիսի ճամբորդութիւն մը ընելու համար ։

Վազը լի բուսին նայելով, Սէլանիկի աշխար-
հագրական կարեւորութեան համար կայսերական
կառավարութիւնը որոշած է այդ տեղը ամրա-
պնդել ։ Այս մասին, Ժէնէրալ Պէլոմ փաշան
յանձնարարուէր է որ երթայ տեղերուն վրայ
տեղեկագրէ, Պէլոմ փաշա՝ Հալիմ և Համալի Է-
ֆէնտիներու ընկերակցութեամբ քիչ օրէն պի-
տի մեկնի Սէլանիկ ։

Ֆիլիքս Գրի մէջ հետեւեալը գրուած է,
Վերջին օրերս Տափիկ կին մը երկունքի ցա-
ւոց կըբռնուի ։ Ամենէ ծանր վայրկեանին Պուլ-
զար կին մը կընեկայանայ իբր գայեակ, և կըսէ
թէ խիստ դուրս կընայ մայրն իւր բեռէն
չուտով մը ազատել, կարծեցեալ գայեակը կը-
մտենայ հիւանդին որ տաժանելի ցաւոց մէջ
կըտառապէր, և ծոցէն դանակ մը հանելով
մանուկին գլուխը կըկտրէ որ դեռ հագիւ կէս
ճամբան եկած էր ։ Երեք ժամ յետոյ մայրը ևս
միւս աշխարհ փոխեցաւ իր նորածին մանկան
քով ։ Այս ոճիրը, որ բուռն չէ պատմութեան
մէջ, զանազան մեկնութեանց տեղի կուտայ ։

Պաղտատի Ձէլա լրագիրը կըծանուցանէ թէ,
տեղւոյն կառավարութիւնը գրամանենդներու
ընկերութիւն մը գտնէր է, որ յաջողէր է գիւ-
ղերու և վրանաբնակ ժողովուրդներու մէջ մեծ
քանակութեամբ կեղծ մեծիտիէ և Հնդկական
լուրի ցրուել ։

Մ Ո Գ Ա Կ Ա Ն

Վեհ ճակատն Աստուծոյ բարձրացաւ զողոյց ծով,
Շրջապատ կայր անի ահաւորող մի լըյտով ։
Ստորին ջուրերը ցողացան ի նոյն ձև,
Անգրադարձ մի տունն այդ լուսին ի ներքեւ ։
Վեհ ճակատն Աստուծոյ և երկու աշխուժ վառ,
Կազմեցին եռանկիւն մի—երեք գաղտնի բառ ։
Եւ ստուերն ու կրկնումն այդ հրավառ եռանկեան
Վեց թիւը կազմեցին—վեց օրերն ստեղծման,

Իւր անհուն ոյժովը զոյ է միշտ Մեծ—Արբան,
Թոյլ կուտայ գլուխ հանել զիմ մեծ գործ ծննդեան ։
Սև ստուերք շար ողոց, բիրտ ճիւղաք գիշերին
Փռույ պէս թող ցնդին ոսպն հողմոց շնչումին ։
Գծոյքը կըցոյցայ իւր առջև կուտայ փայլ,
Երկինքը կըօտրի, կըցոյցայ ամպոյ մալու ։
Եհօվա, Սապաթ, Էլօմ, Էլօի,
Էլիս, Էլիս, Իօտեմ, Սաաթի ։
Յուդային առեւծը իւր փառք կ'առնու կանգ,
Գայ Գաւթ արքայէն, և կանգնէ յալթանակ ։
Կըբանամ եօթ կնիքն այն գրգիւ խորհրդաւոր,
Սաղան զերթ շարթ կ'իջնայ երկինքէն թաւալըր ։

Տէրն ըսաւ ինձ—Հեռի քիւղ զժողք և իւր վիշտ,
Չըգալի թող քու սուրբ տանդ երբեք ամբարիշտ,
Թող սաստէ աչքդ թիւն բիրտուն ժառտաբուխ,
Մոլէսին թիւանց վրայ գարշապարդ կոխէ թո՛ղ ։
Չեռքիւ մէջ առ օձերն քու ժպտէ գ վիրաւոր,
Թոյն խմէ, և թոյնն ոչ տայ քիւղ փնա մահաբոյր ։
Էլօմ, Էլօմ, Սապաթ ։ Էլիս,
Այիա, Այիալի, Օթէս, Չէրօս ։
Ո՛վ կընայ ոտնամբարձ ելանել Տիրոջ իւն ։
Մարդն՝ ամբի իւր ձեռք և սրտով պարզ և սեռն . . .

Այս կերպով լուծէ որ ըզգաղտնիս ծընըդեան,
Թող զգոն իմանայ հանձարովն ամեն բան ։
Բուն ծագումն այս կերպէ կրակէն և հողէն,
Լսեցէք դուք ըզգոնք՝ որ փնտռէք միշտ զոր Էն ։
Իշխաններ բընութեան, մեծցուցէք ձեր դուռներ ։
Լուծ երկնից, կրե՛մ քեզ . . . առ իս ստոր ուղմիկներ ։

Հայ փոստայ իշխանը յաղթեց մեծ Սադանին ,
Չորսին մէջ կրկին զոհուեալ Սողոմոնին :
Չորսին Սողոմոնին Սադանին շղթան գարչ ,
Ար սորոկ իւր ջոհին գեղութեան անէ քարչ :
Քրիստոս՝ Տէր է միայն , Տէր միակ արքայ մեզ ,
Տէր փառք քեզ միայնակ , միայնակ Տէր , փառք քեզ :

Ազատ եմ ես յաւերժ դժոխոյ սարսափէն ,
Ազատ է իմ ոգիս շիրմական տեսիլքէն :
Ես կ'իջնամ դժոխին , և գիրքնք կ'զօնեմ ,
Ես հզօր իմ կամքը անոնց վրայ կ'ընեմ :
Հրաման տամ խաւարին—լոյս ծնէ՛ դու գիշեր ,
Ծագէ՛ դու ո՛վ արեւ , լուսին դու պայծառ լեր :
Երթաւիմ աներկիւղ դժոխքին ստուերոց ,
Ես եմ որ հրամայեմ , ծոցէ՛ք իմ կամայ ,
Չեւերնիդ է զժխեմ զէմբերնիդ զժնդակ ,
Դեք , կուգեմ որ զնեզ , փոխադրեմ ի հրեշտակ ,
Կըխաւիմ աներկիւղ խուժանացդ օղոյ զաղիր ,
Հրաման տամ ես դոցա իմ կամքը անձանձիր :
Այլ ստուերք են վրիպակ իմ աչքիս սոսկաւոր ,
Այլ լոկ ես կրողս իմ իրանց դեզ շանձաւոր ,
Զի սոգիմ աներկիւղ դժոխոցն ի յատակ ,
Եւ կուգեմ ես դոցա զանդոքն իմ մեծ կամք :
Կըսեմ Սադանին աշտապատ շընկոյն ,
Այլ շնչուս է որ մարէ լափիւղոյ նորա բոց :

ՄԱՐԳԱՐԷՆ

ՄԻՒՍԻՒ Ս. ՈՍԿԱՆ

Այս անունը , որ պատկառանք կ'ազդէ ա-
մեն անոնց՝ որք զինքը կըմանչեն իր գործերով ,
մատերս կրկին կըսկսի Եւրոպայի գիտնոց ակա-
դէմիային հասնելը : Ս. Ս. Ոսկան , որոյ դրական բարձր
հանձնարը ծանօթ է բոլոր Հայ դրագիտաց , եր-
կար տարիներ լուսաւորութեան և գիտութեան
օրրանն եղող Բարիկ ապրելէ , հոն երկու տե-
ռակ ընտիր հանգէսներ հրատարակելէ և գրա-
կան տաղանդը լիովին ստանալէ ետեւ , երբ հայ-
րենիք կըվերագաւանայ կըմանսթանայ նաեւ օ-
տար ժողովրդոց և օտար գրագիտաց մինչ գաղ-
ղիւրէն յրագրի մը (Լա Րեֆորմ) հրատարակու-
թեան կըմանարկէ :

Ս. Ս. Ոսկան արձագանք կըգտնէ Բարիկի Ա-
կադեմիոյ մէջ , իւր անցեալները հրատարակած
Օրիւն Գոնի և Սփանի Լիւթիէն անուն տետրակին
միջոցաւ , տետրակ մը՝ որ ստուար հատորի մը
տեղ կըրոնէ իր իմաստալի պարունակութեան
համեմատութեամբ : Տետրակ մը՝ որ մեծաւ Գ.
Կոստանդեանի Մէլիքի վայ խորագրով գրքոյկը
կըքննադատէր : Մէլիքի արժանի էր այդպիսի
քննադատութեան մը երկարութեամբ , վասնզի
չգիտեցածը կըխօսէր և չունեցածը ծախելու ե-
լած էր : Մէլիքի երբ գրելը ձեռքը բռնած տի-
տիկեղերաց կազմութեան առաջին օրերուն մէջ
մանկելով , մինչև մեր օրերը համոզող անպարման
գարուց այցելութեան ելնելով , ճամբուն վրայ
պատահած գիտութիւններու պատկերը կընկա-
րէր մերթնդմերթ հարուածներ կուտար ամեն
կարգի կրօններու որք մարդկութիւնը անուշէր
էին իր ամեն ցաւոց մէջ զանի միտքարեւոյ :
Մէլիքի մերթ գիւղացիին բարի սիրտը թուր մը
կըմտէր , և կըսէր անոր—վերքիդ միակ բշտկու-
թիւնը գիտութիւնն է : Երբեմն առաջին բարի
Աստուածը կըծաղրէր և կըրէր անոր—քու փնտ-
ռածդ Ոչինչն է : Մերթ Աշխարհի նահատակ
Փրկիչը կըթնամանէր և կըսէր—տառի ոչինչ օգ-
տեց մարդերու , որպէս թէ ըսած ըլլար Արե-
գակին—գու ախոռի կանգեց մ'ես միայն ,
կամ որպէս թէ հասկցած ըլլար Յիսուսի—Քրիս-
տոսի խորհրդաւոր վարդապետութիւնը : Մէլիքի
մերթ կ'աղաղակէր կամ աղաղակել կուգէր թէ
յաւիտեական շարժականութեան օրէնքը ան-
զգայ նիւթին անմիջական կամ անշարժառիթ
արտադրութիւնն եղած ըլլար : Գոնէ խորհելու
տունն ունեցած ըլլար թէ այդ է ահա Աստուածը :
Մերթ կըգոչէր կամ գոչել կուգէր թէ , աշ-
խարհադէպի շարժական հաւասարակշռութիւ-
նը երեքտրական զօրութեան մը արդիւնքն ըլ-
լար : Գոնէ համոզուէր երբ մէկն իր ականջին
սապէս հոգէր թէ—ատոր մէջն է ահա քու հա-
լածած Ամենակարող արարչութիւնը , այդ է
ահա քու մտքիդ մէջ չղմած Աստուածը , և
չու ալ որ աշխարհադէպի նման երեքտրակա-
նութիւն ունեցող նիւթ մ'ես , կրնաս այդ զո-

րութենէն խնդրածդ ունենալ , ինչպէս որ սիր-
տը վիրաւորածդ Գեղիկը , ծաղրած աւանդի-
ք և թշնամանած Փրկիչը կրնադրեն և կըգտնեն ,
խնդրեցին և գտան , գոյ չպիտի կրնաս նիւ-
թիդ երեսը ճերմակ հանել , քանի որ իմացա-
կանութեան (Լնդէլիթան) բանականութեան
(Լեզոն) և Բանին գահը կուգնս բազմեցունել
զանի :

Արդ , մինչդեռ Ս. Ս. Ոսկան իւր տետրակով
կըկործանէ Մէլիքի խաբխուր շէնքը , Ակադեմիոյ
անդամներէն Ս. Լիթթիէն , առանց քննադա-
տութիւնը քննադատելու , կուգայ Ս. Գ. Կոս-
տանդեանի վրատակ շէնքը նորոգել , եղբայրա-
կան միտքարութիւններ և հայրական քաջալե-
րութիւններ տալով նմա : Ս. Ս. Ոսկան չյայտ-
ղիր Ս. Լիթթիէնի ալ պատասխանել ուրիշտե-
րակաւ մը , որոյ անունը յիշած էինք Արշա-
նախընթաց թուով : Տետրակը , նախ և առաջ ,
Հայ ժողովրդեան գարական բնիկանաց և թըշ-
ուառութեանց դէմանդող ողբ մնալով՝ երկար
գարերէ ի վեր պարելուն պատճառը պարզելէ
ետեւ , կուգայ Ս. Լիթթիէն համառօտիւ իր բն-
թերցողաց ներկայել , որմէ ուշիմ ընթերցողը
կրնայ հասկնալ թէ , որքան գիտութեան գէմ
կըմեղանչէ նա , անհեթեթ գրութեան հիմա-
դրի մը յաջորդութիւնն ստանձնած՝ հոս ու հոն
իրեն ներակրթեալներ մուրալով : Ապա , կրկին
վերագաւանալով տիեզերական գոյութեան և
Բացարձակին խնդրոյն , կ'իմաստասիրէ իր բնա-
տուր հանձնարով , և յետոյ երեւելի գիտնոց և
փիլիսոփայից գրական հատուածներէն յառաջ
բերելով կըվերջացնէ իր խօսքը :

Վերջապէս արեւելի գրական այս մեծ մար-
դը կրկին փայլ մը կուտայ իր հանձնարին , փայլ
մը՝ որ ամբողջ հայութեան ևս կըվերաբերի :

ՄԱՀԱԳՈՅՍ

Անցեալ երեքշաբթի առաւօտուն , քաղաքիս
Եկեղեցական դասէն շնորհալարդ տէր Առաքել
քահանայ առ Աստուած փոխեցաւ իր ծերու-
նազարդ հասակին մէջ , Հարկ չէ ընել թէ՛ հան-
գուցեալ Հայրը զուրկ չէր բարեմասնութիւննե-
րէ , և երկար տարիներէ ի վեր քահանայադո-
ւութեան պաշտօն կըլայէր , որով ազգին՝ եր-
կարօրեայ երախտաւորաց մէկ անհատն եղած էր :
Քաղաքի հանգէտը նոյն օրը տեղի ունեցաւ ,
յետ կատարման իւր Ս. կարգին և պաշտօնին
պատշաճ արարողութեանց :

—Միևնոյն շարժուն մէջ , մեծ և ցաւալի կո-
րուստ մը ևս ունեցաւ ազգը , Յովհաննէս Միր-
զա Վանանդեցի զրկուեցաւ ի կենաց իւր այր
հասակին մէջ , ի մեծ սուգ թողով իր առա-
քինի բնասնիքն ու ամբողջ բարեկամներն ու
ծանօթները , Հանգուցելոյ բարեմասնութիւնն
ներք , առաքելի վարքը և մանաւանդ ազգին
մատուցած ծառայութիւնները գրեթէ ամբողջ
ազգին ծանօթ են : Հանգուցեալը , գեռ քան
տարեկան հասակը չըրացուցած , դաստառու-
թեան պաշտօն վարել սկսած էր ի Պոլիս , մաս-
նաւորապէս Միջագիւղի մէջ , ուր թէ գառա-
տուի և թէ տնօրինի պաշտօնները վարած էր
մեծաւ յաջողութեամբ շարունակ քանի մը
տարի : Նաեւ երուսաղէմի Ս. Յակոբայ վանոց
ժառանգաւորաց ուսումնարանը արժանացած
էր երկու տարի բարեկալատակ հանգուցելոյն
տնօրինութեամբ վարել , ուր համանգամայն
դաստառ էր Տրամաբանութեան և բարոյական
իմաստասիրութեան : Թէ ի Պոլիս և թէ յերու-
սաղէմ բազմութիւն յառաջադէմ աշակերտներ
հասուցած է կրօնական և աշխարհական ուսմանց :

Հանգուցեալը խիստ հմուտ էր հայկաբանու-
թեան : Նորա կորուստութիւնը կըփոյլէր ոչ
միայն դաստառութեան , այլ նաեւ ազգային
գործոց մէջ , Աղքատասիրաց ընկերութեան եր-
կարատեն անդամակից ըլլալէ զատ , վերջին
ժամանակներս նոյն ընկերութեան ատենապետ
եղած էր , վարեց նաեւ բաւական տունն դա-
ւառիս երեսփոխանական ժողովոյ անդամի պաշ-
տօնը , սոյն պաշտօնին մէջ մեծ փոյթ և ազգա-
յին գործոց բարեկարգութեան համար խիստ
անաշուղթիւն ցցուցած էր :

Վերջապէս թէ Չմուռնիոյ ամբողջ հասարա-
կութեան և թէ ի Պոլսոյ և Երուսաղէմի իւր
ծանօթից համար՝ զգալի կորուստ մ'է Յովհան-
նէս Միրզայի մահը , որ վաղահաս է յաւիտե-
անկաւորելով որ մահը իմիշտ ապրածամ զոհերով
կուգէ մարդկութեան սիրտը վիրաւորել , մեք
ևս պարտիմք երկնային և յաւիտեական կեանքը
մտածելով միտքաւորել և մաղթել , ինչպէս ա-
մեն ուրուք , նոյնպէս նաեւ բարեկալատակ Յով-
հաննէս Միրզայի , բարեբարոյ և առաքելի բն-
տանեաց համբերութիւն և միտքաւորութիւն :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Նահանգիս արտաքին գործոց վերապետը ,
վսեմափայլ Տիրան Էֆէնտի Թալիսաֆեանի և
մեծաշուք Յովսէփ Չէլէպի Յովսէփեանի դուստր
աղնուաղարմ օրերորդ Զարուհոյ հարսանեաց
հանգէսը տեղի պիտի ունենայ ամսոյս 15ին ,
երկուշաբթի գիշեր , ի Պոլսնապատ յիշեալ մե-
ծաշուք Չէլէպիի օպարանքը : Նոյն երեկոյ ,
ժամը 9ին ըստ երրորդացոց , յատուկ կառա-
խումք պիտի մեկնի Չմուռնիոյ կայարանէն՝ հը-
րաւիրեալներն ի հանգէս տանելու համար :
Նաեւ փառաւոր պարահանգէս մը պիտի տրուի ,
ի պատիւ մեծաւ հանգիսականաց և պիտի տե-
մինչև առաւօտեան ժամը 3 1/2 ըստ երրորդա-
ցոց , և յաւարտ հանգիսին , մասնաւոր կառա-
խումք կրկին ի Չմուռնիոյ պիտի վերագարծը-
նէ հանգիսականները , Սոյն հանգիսին ներկայ
պիտի գտնուին Ն. վսեմութիւն Տիրան Էֆէն-
տիի քեռայր , վսեմ Սարգիս Էֆէնտի Համամ
ճեան և վսեմ Սիմօն Գլէյ Մաղսուտեան , նաեւ
քաղաքիս օտար տէրութեան ներկայացուցիչք :

—Բարձրագոյն Դուռը հետեւեալ շրջաբերա-
կանը ուղղած է Չմուռնիոյ ընդ հ. կառավարչին
«Տէրութեան պիւտէն հաւասարակշռութե-
մէջ զննելու , և ներկայ տարուան ծախսոյցը բայց
լրացնելու համար , Պաշտօնէից Խորհուրդը որո-
շած է , որ բոլոր պաշտօնատեղեաց ծախսոց
հարկերին տասը դրոշուի յետոյ , 15ն սկսեալ :

«Այս որոշումը , որ կայսերական իրաւունքով
վաւերացուած է , հաղորդուեցաւ տէրութեան
ամբողջ վիւլայէթներու կառավարչաց :
«Չմուռնիոյ վսեմութիւնն ալ կըհրաւիրուի որ այս
որոշումն ի գործ դնէք : Երեք կարգի պիտի
բաժնէք իրենց կարեւորութեան համեմատ ,
Մի-Լեւալիէն Գլէնտի ու Գալաֆաճ Գլէնտի քեռ-
թիւները ևս երեք կարգի պիտի բաժնէք և
անոնց ամսականներն ալ իրենց կարգին համե-
մատ պիտի տրուին : Ուրիշ քաղաքական պաշ-
տօնեայներու ամսականներէն և ձեր վարչու-
թեան ներքեւ գտնուող ընդ հանուր ծախսերէն
հարկերին տասը դրոշ պիտի ընէք :

Ուստի այս հիման ցանկ մը շինելով կընդ-
րուի Չմուռնիոյ վսեմութեան , որ շուտով ի Կ. Պոլիս
զրկէ : Երբ նոր կարգադրութեան սկսիլը Չմու-
ռնիոյ վսեմութիւնը պէտք է հոգ տանի , որ չափա-
զանց ամսականները աւելի զեղչէ և խիստ նը-
ւաղ ամսականաց վրայ ալ համեմատական յա-
ւելում մը ընէ :

—Բանը մը օր առաջ , Լեհաստանցի հրէայ
երկրասարդ մը , Քրիստոնէութեան Ս. կրօնքն
ընդունելով , Հայաստանեայց Եկեղեցոյ գիրկը
գիւմեց : Նոր խորայելը կիրակի առաւօտ տուրք
Ստեփաննոս Եկեղեցոյ մէջ հանգիսաւոր արա-
րողութեամբ Յակոբ անունով մկրտուեցաւ :

—Օտան Էֆ. և Մարք Օննիկ Պէյ կըսպասուին
Տիրան Էֆիի հարսանեաց ներկայ գտնուելու :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Աֆիօն.—Վերջին երկու շաբաթուոյ մէջ մեծ
քանակութեամբ ծախուեցաւ այսինքն 314 կո-
ղով , ի գին 132—145 դուրուշի չէփին :

Բամիակ.—Երբ հունձէն 100 հակ ծախուեցաւ
այս շաբթու , մեքենայով մաքրուած տեսակէն
ի գին 390 դուրուշ կենդինարր :

Տէր Լրագրոյ ,

Դ. — Կա Գ. Պաշտօնէի :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՅՍ ԱՐԱՐԱՆԵԱՆ